

**Ծրագրի
անվանումը**

Արևային ֆոտովոլտային համակարգերի կառուցում



**Ծրագրի
նկարագիրը**

Բարենպաստ կլիմայական և աշխարհագրական պայմանների շնորհիվ՝ վերականգնվող էներգիայի աղբյուրների շարքում հեռանկարային է էկոլոգիապես մաքուր արևային էներգիայի օգտագործումը, որը կնպաստի ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը և շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծմանը:

Ծրագրով նախատեսվում է Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտայի (Մատենադարանի հատված) հարևանությամբ գտնվող բազմաբնակարան շենքերի և Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանի մասնաշենքի տանիքներում արևային ինտեգրված համակարգերի կառուցում:

1 կՎտ հզորությամբ ֆոտո-էլեկտրական համակարգի տեղադրման համար անհրաժեշտ է շուրջ 7քմ արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրում, որն էլ, օպտիմալ պայմանների դեպքում, թույլ կտա տարեկան արտադրել շուրջ 1600կՎտԺ էլեկտրաէներգիա: Օրենսդրական բարեփոխումների արդյունքում 1000կՎտ-ը չգերազանցող հզորությամբ համակարգերին հնարավորություն է ընձեռվել արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկը վաճառել Հայաստանի էլեկտրական ցանցերին: Նշված գործընթացն ազատված է բոլոր տեսակի հարկերից: Մինչև 150 կվ հզորություն ունեցող համակարգերը տեղադրվում են առանց լիցենզիայի և կարող են էներգահամակարգի հետ աշխատել փոխադարձ հաշվարկների սկզբունքով (<<net metering>>)՝ պահ տալով էլեկտրաէներգիայի ավելցուկը էլ.ցանցին և այն վերցնել ոչ արևային ժամերին՝ տարեկան հնարավոր ավելցուկը վաճառելով էլ.ցանցին՝ գործող մանրածախ սակագնի 50%-ով:

**Տեխնիկական
ցուցանիշները**

Տանիքների թեքությունը ընդունված է 30°, տանիքների ընդհանուր մակերեսը կազմում՝ 4137քմ, որը ներառում է Մաշտոցի պողոտայի հատվածում՝ 4 բազմաբնակարան շենքի և Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանի մասնաշենքի տանիքները

Ծրագրի արժեքը


Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1 մլն դոլար:

**Ծրագրի
ժամկետները**

Տեղադրման աշխատանքների ժամկետը՝ շուրջ 1 տարի:

**Ներկա
իրվախճակ**

Ներկայումս Կենտրոն վարչական շրջանում տեղադրված է արևային ֆոտովոլտային համակարգեր Հերացի փողոցի վրա գտնվող Հայամերիկյան առողջության կենտրոնի (մամոգրաֆիայի կենտրոն) տանիքում: Տեղադրված պոլիմերային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների ընդհանուր մակերեսը կազմում է 200քմ, հզորությունը՝ 9.8 կՎտ:



Ծանոթագիր.

- Տանիքի թեքությունը ընդունված է 30°, այսինքն՝ հարթ մակերևույթի մակերեսը բազմապատկվում է 1.1547 գործակցով:
- Տանիքի թեքությունները ենթակա են ճշգրտման տեղում: